

15902

ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆ



ՊԵ ԾԻԿԹԱՅԼԵԱՆԻ



891.99

Պ-45



ՄԿՐՏԻԶ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆԻ

ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Զ.

Վ Ա Յ Է

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ԵՐԵՎ ԱՐԱՐՈՒԱԾ

---

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Վ. Է. Պ. ԶԱՐԳԱՐԵԱՆ ԵՂՐԱՍԵՐՆԵՐՈՒ

Կ. Պոլիս Զազմագնրլար քիւ 24—26

---



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊՈՂՐ. Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ Է. ՈՐԴԻՐ

—  
1910

Ա Ն Ձ Ի Ն Ք

- ՎԱՀԷ . . . . . Թագաւոր Հայոց
- ԶԱՐՄԱՅՐ . . . . . Որդի Վահեի
- ԱՐԴՈՒԱՐԴ . . . . . Իշխան Սրենեաց
- ՎԱՐԱԺ . . . . .
- ԱՐԲԱԿ . . . . . } Նախարար Հայոց
- ՏԻՐԱՆ . . . . . }
- ԱՐՏԱՒԱՋԳ . . . . . Մեծ Իշխան Հայկազուն
- ԼԻՒՍԻՄԱՔՈՍ . . . . . Զօրավար Մակեդոնացի

Զօրական Հայոց եւ Յունաց

Վ Ա Հ Է



ԱՐԱՐՈՒԱԾ Ա.

ՄՐԱՀ ՍԻՆԱԶԱՐԴ ԵՒ ԴԱՀ

Տ Ե Ս Ի Լ Ա.

ՎԱՀԷ, ԶԱՐՄԱՅՐ

ՎԱՀ. — Ի՞նչ լուր, որդեակ իմ Զարմայր, ինձ կը բերես Արուսեակէն:

ԶԱՐ. — Սօսեաց զիցանուէր անտառին խորհրդաւոր չուքերը ծառայեցան իւր կաւազեղ ճակախն վրայ. հոն վախաբեցաւ ծածկելու իւր արտառուքը, հառաչանքէն ու թշուառ սերը. իւր ցաւոցը սխախանք մը գանկու համար մենաւոր անտառին ամալութեանցը զիմեց, որովհետեւ մարդոյմէ կարեց լ'ը յոյ ը, ու ոչ ոք կրցաւ բուժել Հայկեան օրիորդին կարեւիւր սիրտը:

ՎԱՀ. — Վահէին նիզակը զիտցաւ ինչուան հիւսայ Հայաստանին լերանց ու դաշտացը վրայ ախոյան կանգնել թշնամուցն խորխտ արձակեանցը գեմ. ինչուան հիւսայ հաշտ ակամբ նայեցան ինձ զիք երկնից կամարէն. ու յաղթանակօր պակեցին իմ սասարթս որ միշտ Թորդունական լախտին վրայ տարածեցի աննկուն բազկաւ. ինչո՞ւ անոր հայնուսն տակ չուզեց ապաստանել իմ օրիորդս արքայազուստն Արուսեակ. ինչո՞ւ անտառներու մթութեանցը մէջ խուսափելով սարսաղ կը թնորս հօր մը, այս սիրալիւր հօր մը թեւերը, որ աչքոսի ատեն սովորեր էին զինքը զգուելու. իւր մէկ գրկածութեանը մէջ կը մտնայի եւ միանկեան թաղին աագնապը ու փաւստաննչ սրտի մը վրդովը. իւր մէկ ժպտը, մէկ նայուածքը, մէկ համբոյրը քրտնահար ճակախ վրայ, կարծես թէ սրտերազմաց չըօինը կը բեցնէր ու անպիսի երջանկութիւն մը կազդէր սրտիս որն

որ փառքը ու շողջողուն դահը չեն կրնար ընծայել . բայց Արուսեակ կը մտնայ հիմայ իւր հայրը . . . ա՛հ , ապերախտ աղջիկ :

ԶԱՐ . — Հա՛յր , Արուսեակին փափուկ սիրտը միշտ կը խանդաղատի դիւցազուն հօր մը վրայ ու երբէք անդգայ չէ թորգոմեան աշխարհին բաղրին ու պարծանացը : Ո՛վ իրմէ աւելի վառվառն հողւով կը հռչակէր ու կ'երգէր քու յաղթանակներդ , գինուցը համբաւը ու մեր արխազունդ բանակին քաջութիւնները . ո՛վ իրմէ աւելի սրբատաղին աչք մը կը նետէր սու առտեղափայլ կամարն , մաղթելով երկնաբնակ աստուածներէն յաւերժ բարեբաւասութեանն ու մշտայաղթ փառաց պատկներ Հայաստանին . բայց վերջապէս իւր քնաւրին թեկերուն մէջ խառնուեցաւ սրտատաշտը ձայն մըն ալ , բոցավառ դղացում մը՝ սէրը , որ իւր ծաղիկ կենացը աղետարնէր եղաւ . հայրենիք ու սէր իրարու հետ մենամարտեցան մահացու հարուածներով սրտին մէջ ու արխազունայ ըրին գայն . դո՛հեց ինքը սէրը ու անոր հետ մէկտեղ իւր կենաց երջանկութիւնը հայրենեաց սեղանին վրայ , ու նետահար թախտ մը պէս ինկաւ Սոսեաց անտառին սրբազան ասուերացը մէջ , երկու սիրելի անուններ միշտ բերնին մ'ջ մըմնջելով , Վահէ և Արտաւազ :

ՎԱՀ . — Վահէ և Արտաւազ . երկու անուններ որ ատելութիւնը եւ անտար վրէժխնդրութեան բորբոքը իրարմէ բաժներ ու անհուն խորխորատով հեռացուցիւր են , կը միանան իմ աղջկանս չրթունքներուն վրայ . Արտաւազ , որ արխազութոր նախաստինը մը քանդակեց Վահէի ճակատին վրայ ու բոցը իւր արեամբը պիտի չը կրնայ սրբել . Արտաւազ , որ Մակեդոնական գոռողութեան ամբարտակին կրթնած , կը խորխոսայ Հայիկան վահանին փառքը խրամատել , սրուն սրտին մէջ մասնութեան ճիտադները որջացիւր , Հայաստանին վրայ թոյն , աղէտը , աւերած ու կործանում կը փչեն , այդ անունը , ա՛հ , ինչպէս անոյջ աղջկան մը սիրտը իր ճիրաններուն մէջ սրաց . ինչպէս իւր հրատուրանաց սևուրակ բաժակը սրբոյց ու կախարդեց զինքը . բայց մտացաւ անմիտը որ այդ աղջկան հայրը Վահէ մըն է , արեամբ չափ վրէժխնդիր իւր զարմին ու աշխարհին փառացը ու պատւոյն . այո՛ , ահեղ պատերազմի մը խառնամբոյն դղորդմունքը կը բեծ հետուէն : Յունաստան մօտ է Հայաստանին վրայ շատաչելով դատարեալ ընկճելու համար զինքը դաւադրութ մասնիցի մը օգնութեամբ . բայց ո՛չ Արտաւազ , ո՛չ Մակեդոնիա , ո՛չ , անվանելի Աղէքսանդր կրնան տարտափ մը աղբիկ ինծի , ու ասիպիկ զիս անիրաւել Արամեան գահուն փառքին դէմ :

ԶԱՐ . — Սարկայն կ'աղաչեմ հայր , քու վրիժուցը և փառաց արխական խորհուրդներուդ մէջ , գթած աչք մը նետէ՛ այդ օրիորդին վրայ որ սոց ու միայնութեան մէջ իւր գեղածաղիկ կեանքը պիտի մաշեցնէ :

ՎԱՀ . — Որովհետեւ իւր հօրը կամացը դէմ ընտրեց այդ մետաւոր կեանքը , նուիրական անտառին պահապան աստուածոց պաշտպանութեանը կը յանձնեմ զինքը :

ԶԱՐ . — Ու երկրիս վրայ ե՛ս ուրեմն մինակ մնացի անձկալի քրոջ մը օգնական ու մտերիմ . այո՛ , քոյր իմ , թող պիտի չի տամ որ մութ անտառի մը սարսափները և հողմակոծ տերեւոց սոսափիւնքը քու մինակ ընկերներդ ըլլան . իրեն հետ մէկտեղ երխտասարդ կենաց ամբիժ հաճոյքները վայելցի . իրեն հետ մէկտեղ չընչեցի մեր հայրենի լեռանց հովաաց ու պարտէզներու օդն ու անուշահոտութիւնը . իրեն հետ վարժեցայ մեր մանկութեան օրերը Հայկազանց նախնի քաջերու փառաւոր յիշատակաց մէջ անցընելու , իրեն հետ մէկտեղ միեւնոյն վեհազն հօր մը վրայ կը պարծիմ , ու հիմայ իրեն հետ կարեկից պիտի ըլլամ նոյն հօրը սիրոյն կորստեանը վրայ , եւ ուրիշ սիրոյ մը թշուառութեանը վրայ . ներէ՛ , հայր իմ , Վահէ և Արտաւազ իւր սիրոյն ու թշուառութեան ատիթներն են . Վահէին և Արտաւազին սեղը հիմայ եղբայր մը միայն մնաց իրեն :

ՎԱՀ . — Դուն Արտաւազդին սեղը . բայց գիտե՛ս որ Արտաւազդին սեղ ըլլողը պէտք է Վահէին թշնամի ըլլայ , և մահարեք թշնամին :

ԶԱՐ . — Ա՛հ , հայր իմ :

ՎԱՀ . — Գիտե՛ս որ Արտաւազը Վահէին բարերարութեան պարգևներովը անշուք վիճակէ իշխանական պերճութեան բարձրանալով յանդգնեցաւ իւր փառամոլ բաղձանքները ինչուան թագաւորական գահուս ոտքը հասցնել յանդգնեցաւ իւր գոռոզ աչքերը մինչև թորգոմեան օրիորդին վրայ վերցնել :

ԶԱՐ . — Սակայն Արտաւազ . . .

ՎԱՀ . — Գիտե՛ս որ Արտաւազդին սեղը Հայոց թշնամեաց կարգին մէջ է , դաւաճանութեան և տիրադրութ մասնութեան դրօշակին տակ և անոր սեղը բռնել ուզողը իրեն պէս ասպատակ , տիրադրաւ և մասնիչ կըլլայ : (Կը նստի գահին վրայ) :

ԶԱՐ . — (Ոսքը իյնալով) Բաւական է հայր . մի՛ զարներ զիս քու բարկութեանդ շանթերովը որոնց սրժանի չեմ ես . երբ պատե-

բազմը բորբոքի՛ իւր անկզ վասնզնեհուն մէջ պխտի տեսնաս քու որ-  
դից, ոչ քեզի համար արիւնը տարով պխտի բողբոքէ իւր վրայ եղած  
անխրաւ կասկածներուն զէմ՝

ՎԱՀ. — Լաւ է Զարմայր, ելի՛ր սօք. բայց չըլլայ որ Արատ-  
ւազդին անունը տաս եթէ չես ուզեր հօրդ բարկութիւնը գրգռել  
քեզի՛ զէմ. թագաւորի մը կամքն ու խորհուրդները անտասան և գօ-  
բաւար պէտք է ըլլան ինչպէս իւր սուրբ, և ոչ թէ գիւրարեկ ինչ-  
պէս ստիպական մահկանացուաց խորհուրդները. թո՛ղ սուր ուրեմն  
Վահէն որ անխիանդ հաստատութեամբ յառաջ քալէ բախտին իւր  
գլխացը բացած ասպարէզին մէջ ի պայծառութիւն իւր գահուն . . .  
հիմայ հոս պխտի գումարին իմ իշխաններս մեծամեծ իրաց վրայ խոր-  
հելու համար. դուն գունդ մը պահապան գօրծով գնա՛ և զգուշայլ՛ր  
Սօսեաց անաստին և Աբուսեկին վրայ. ա՜նա կուգան :

ԶԱՐ. — Ուրախութեամբ կրնդունիմ այդ պաշտօնը քու ձեռ-  
քէդ հայր, բայց երբ պատերազմին փոքր հնչէ, պխայի՛ր հայր որ ա-  
ռայի՛նք պխտի ըլլամ քու քովդ վաղելու :

Տ Ե Մ Ի Լ Բ.

ՎԱՀԷ, ԱՐԲԱ, ՎԱՐԱԺ, ՏԻՐԱՆ ԵՒ ԶՕՐԱՎԱՐԲ

ՎԱՀԷ. — Իշխանք և գորավարք Հայոց. գխտէք որ բոցածա-  
ւայ պատերազմի մը հրդեհը բոլոր Ասիա ճարակեր ա՜նով ու սարսա-  
փով պաշարեր է ամէն ազգերն ու թագաւորութիւնները. բազմա-  
գարեան ինքնակարութիւնք կը զզրդին կ'իշխան. փառաւոր գահեր ա-  
հագին կործանեմք իրարու վրայ կը թաւալին. թագաւորք աւե-  
րակներու վրայ կը ստրտին և ժողովուրդք գերութեան շղթաներու  
մէջ կը հեծնն. գոռոզացեալ աշխարհակալ մը մէկ ձեռքը սուր՝ միւս  
ձեռքը շղթաներ իւր խրոխտրնիթայ երկվարաց ամբակներովը կը կո-  
խէ արքայից և ազրաց հողամած գրուխը. Չախշախեալ գահերու և  
թագերու վրայէն իւր թագին արեւը կը փայրատակէ. Հայաստան  
գեո ազատ մնայ համակործան աւերածէն, և բացուատ ի բաց լոնց  
միտն անոր արշաւասոյք կատաց սրտամուկըր. վերահաս տազ-  
նասլին բանութիւնը խորտակելու համար քառասուն հազար հետեւակ

և հինգ հազար հեծեալունը Պարսից Դարեհ թագաւորին օգնութեան  
փութացուցի, քաջին Արգուարդայ Սիւնեաց իշխանին զօրախարու-  
թեամբք. ուրախութեամբ դիմեցին այդ գլխագրաւ արշաւանաց վը-  
տանագայր մէջ, որպէս զի հայրենի ազատութիւնը աներկիւղ ճախրէ  
մեր սասնասոյց լերանցր վրայ. և թերեւս հիմայ անոնք զիւցաղնա-  
բար շահատակելով Սոնք բռնակալին զէմ, անոր գոռոզութեան կո-  
թողը կը տապալեն, և բոլոր Ասիայ նախատանաց վրէժը կը լուծեն  
իրենց արեանը հեղեղներուն մէջ. բայց երբ անոնք հեռաւոր աշ-  
խարհներ պատերազմին աղետից և վտանգներուն հետ կը մարա-  
ւին, մենք հոս անփոյթ պխտի կենանք, ու ան ատենը մինակ  
պխտի շարժիւնը երբ թշնամույն երկվարայր մարտորտ խրխիջները  
յանկարծ մեր սկա՛նջը գարնեն, ո՛չ, ես հաստատ սրտած եմ Հայկա-  
կան բանակին միահամուռ զօրութեամբք դիմել Պարսկաստան Աղէք-  
սանդրի Մակեդոնացուցն զէմ. մասնակից ըլլալ մեր քաջագուն օժան-  
դակ գնդին փառացը կամ անոնց արեանը վրէժը պահանջելու. թո՛ղ  
թշնամին մեր գեականցը վրայէն անցնելով կոխէ Հայաստանին բը-  
լուրներն ու դաշտերը. խօսեցէ՛ք դուք ալ և համարձակ յայտնեցէ՛ք  
ձեր կարծիքները :

ՎԱՐ. — (Յոսս ելանելով) Արքայ քաջ. քու քաջութեանդ և  
խնատութեանդ աքժանէ խորհուրդներ յայտնելիք մեզի. այո՛, Հա-  
յաստան աշխարհին ազատութիւնը պատերազմի մէջէն ծնաւ. պա-  
տերազմներու մէջ մեծցաւ և թեւատարած հովանացաւ Այրարատեան  
գաւաններու վրայ, և մեր հսկայագօր Նախահօրը Հայկին լայնալիճ  
աղեղան մէջէն խոյանալով գետինը փոնց ամբարտաւան հսկան. Ա-  
րամ, Տիգրան, Պարսըր, Վահագն պատերազմով վանեցին խաժա-  
ղուժ ազգաց արշաւանքները. փառաւորեցին իրենց հայրենիքը և  
իրենց յայթախան վահաններուն տակ պաշտպանեցին նոյն ազատու-  
թիւնը. և դու արքայ, և դու գահակալութեանդ սկիզբէն ի վեր մի-  
թէ պատերազմով չէ՞ որ ընկճեցի բազմաթիւ ազգեր և գինուցդ  
սարսափը տարածեցիք անոր քան զԿովկաս և զՀլուսիս. և միթէ  
հիմայ Հայու երակներուն մէջ տատմ է իւր նախնեաց արիւնք.  
միթէ մտցաւ ազգութեան և ազատութեան հետ դրամ գաշխարք և  
ձեռուները ինքիրեն պխտի երկնցնէ՛ գերութեան շղթաներ ընդունե-  
լու համար, ո՛չ, քաւ լիցի, հետե՛ւ մեզմէ այդպիսի վատութեան  
խորհուրդներ, անխոյթ, անգործ և պաղարիւն ժողովրդոց կը վայե-  
լեն գերութիւնն ու թշուտութիւնը. Հայը Չանքով և գործունէու-

Թեամբ իւր քաղաքական կեանքը ճարեց՝ վայ իրեն թէ որ ձեռուր-  
ները կապած նստի. Աղէքսանդր Մակեդոնացին կ'ուզէ բոլոր ազգերն  
իւր կառքին ետևը կապած քաշկոտել. թող Հայաստան թու՛մը մի  
կանգնի ու խորտակին այն կառքին անիւնները. ուստի իմ խորհուրդս  
պատերազմ է և յայտնի պատերազմ: (Նսսի):

ԱՐԲ. — Խաղաղութիւն է իմ խորհուրդս, արքայ քաջ, միթէ  
չե՛նք տեսնար, և դու ալ վեհագն տէր, միթէ քիչ մը առաջ չի նը-  
կարազրեցիր մեզ պատերազմաց աղէտքը, թաղաւորաց անկումը,  
ժողովրդոց թշուառութիւնքը միթէ իմաստութիւն չէ՞ ահագին փո-  
թորիկի մը դիմացը քիչ մը ստեն ծով, ինչուան որ անցնի գլխուդ  
վրայէն. բնաւ չեմ տարակուսիր Հայոց գեղին հայրենասէր արիւ-  
թեանը վրայ. և կը զարմանամ ու կը պարծիմ Հայկաց, Արամայ,  
Տիգրանայ ու Վահագնի վրայ. չեմ տարակուսիր որ Հայաստան զօ-  
րաւոր թու՛մը մի կրնայ կանգնել մոլեգին թշնամեաց դէմ. բայց որ  
անկործան թու՛մը ու պարիսպ կայ բախտին դիմաց. և եթէ մէջ մը  
անանք կործանելու ըլլան ի՛նչ աղէտից և թշուառութեանց մէջ կը  
թաղենք մեր երկիրը. և դու տէր, քու զինուցք տարասիր տարա-  
ծեցիր անոր քան զիովհաս, և յաղթական գափնիներ կը շողան  
ձակտիզ վրայ. ուրեմն պատերազմը ալ կարող չէ նոր փառք սուր-  
ցնել այն պատկերուն. խաղաղութիւնը միայն, այս խաղաղութիւնը  
միայն նոր և սուելի շքեղ փառք պատրաստեր է այսուհետև քեզի և  
Հայաստանին: (Նսսի)

ՏԻՐ. — (Յոսս ելանելով) Իմ խորհուրդս ո՛չ յայտնի պատերազմ  
է և ո՛չ բոլորովին խաղաղութիւն. երբ բոլոր Ասիոյ ազգերը, և մա-  
նաւանդ թէ աշխարհն, վեր ի վայր կը վրդովի և հրդեհ մը բորբո-  
քեր կը բախէ թաղաւորներն ու թաղաւորութիւնները, իմաստութիւն  
է հեռու մնալը ազատնացող վտանգէն, բայց ոչ թէ թուլարագուկ  
խաղաղութեան և անգործութեան վրաններուն սակ, այլ գործունե-  
եաց խոհմութեան արթնութեան և զգուշութեան. յանձնապատաս  
և գահավէժ ընթացք մը կրնայ մեծամեծ գործքերն ու խորհուրդները  
ժայռերու դէմ փչրել. նոյնպէս թուլութիւն մը, անհոգութիւն մը  
կրնայ խուլ ընել ազգի մը ականջները ժամանակին սղգարար ձայ-  
ներուն, որ մի անգամ մինակ այնպիսեաց համար իւր բարերար  
պաշտօնը կատարելով անբարձ կը կորսուի դարերու. հոսանքին մէջ.  
ժամանակը իւր արագաթիւղ թեւերուն վրայէն բաղմարեղուն հուն-  
տեր կը դանէ ամէն ազգաց վրայ. անոնց կեցնայ քրտամբք երեսաց

տողի, արգասաւորի և բարգաւաճիլ իրենց բաժին ինկած սեր-  
մանը ու յարմար ատենին անուն հունձը մը քաղել. ժողովներ ու-  
րեմն մեր ամէն զօրութիւնը, գէնքը ձեռուքնիս սպասենք մեր հայ-  
րենի սանձանացը վրայ միշտ ստրագալին վրայ աչուրնիս անկած, ու  
պատրաստ կենայով ամէն յեղակարծ դէպքերու դիմաց. (Նսսի):

ՎԱՀ. — Պատերազմէ հրաժարիլ ո՛չ Վահէին յօժարութիւնը և  
ո՛չ ժամանակիս դիպաց հարկը թող կուտայ, պատերազմը արդէն  
սկսած է Հայաստանի և Յունաստանի մէջ. քառասուն և հինգ հա-  
զար զօրաց բանակ մը հիմայ Ասիոյ բաշխածու պաշտերուն մէջ  
Պարսից հետ Աղէքսանդրի տապարէզ կը կարդան. Հնք, Աղուանք,  
Վիլք, Կորդուացիք և Տմարեաց աշխարհը, իմ սուրճանդակներս ըն-  
դունած են հիմա ու իրենց գնդերը կը պատրաստեն իմ բանակիս  
մէջ խառնուելու յորդաճար գեաերու նման. առանց Արդուարդին  
լուրերուն սպասելու և վտան յօգնակամութիւն Ողբումպեան Սառ-  
ուածոց պիտի գեմիմ իրեն ձեռք երկնցնելու որ... (Յոսս ելանել  
ամենեքի՛ն):

Տ Ե Ս Ի Լ Գ.

ԱՐԴՈՒՍԱՐԴ ԵՒ ԱՌԱՋԻՆԻ

ԱՐԴ. — Կեցցե՛ Տէր իմ արքայ:

ՎԱՀ. — Ի՛նչ կը տեսնամ, գուն Արդուարդ հո՞ս:

ԱՐԴ. — Այո՛ և մինակ եմ:

ՎԱՀ. — Ու իմ քաջերս:

ԱՐԴ. — Ինկան ամենն ալ:

ՎԱՀ. — (Յոսս ելեալ) Ի՛նչ կը լսեմ. ինկան իմ քաջերս ու  
ես դեռ չեմ փութար անոնց վրէժը ատնելու:

ԱՐԴ. — Ինկան ու իրենց մահուանը վրէժը առին կատրածն  
ու մահուան տարտախը թշնամուցն բազմամբոյս բանակին մէջ սրփ-  
ուելով. զուարթութեամբ թողուցին հայրենի դաշտերը Աղէքսանդրի  
դէմ սրանալու համար, ու զուարթութեամբ մեռան պատերազմը դաշ-  
տին վրան Հայ անուան հաչակովը Ասիոյ արձագանքները լեցնելով:

ՎԱՀ. — (Նսսի) Լսեմ քու բերնէդ իրենց զիւցաղնական շա-  
հատակութեան պատմութիւնը ու այն բաւական մրիթարութիւն  
ըլլայ ինձի իրենց կորստեանը:

ԱՐԳ. — Յեանն սղջոյնը տարով մեր քաղցր հայրենեացը, կանոնքը և որդւոցը խօսք չտուինք իրենց կենդանի գտնուալու. բայց խոստացանք Հայ անուան պատիւը մինչև գերեզման անարատ պահելու. և այդ խոստումը ամբողջ կատարուեցաւ. մտանք Պարսկաստան, և Աղքատները անուանէն սարսափած ժողովրդոց մէջէն աւերեցաւ և բարձրագոյն անոյնելով յատաճացանք դէպի երկրին խորերը, գետերը, ձորերը, գահաթէժ լեռները գիւրասան ձաւերաց մը յարգեցին մեզի, և բնաջինջ ընելով Յունաց յատաճագահ գնդերէն մէկը, որ կուզէր արգելք ըլլալ մեր արշաւանացը. հասանք և միացանք վերջագէս Դարենին աշխարհախումբը բանակին և Բոսս գետին քով ձակասեցանք Աղքատներին դէմ. սակայն եղաւ խոստուրդը, և հօգը գիտնալով թեմէ վերջը խորասկեցան Պարսիկք, և ջիբ ուցան եղած սկսան փախչիլ. այդ տնեղ ձակաստամարտը անհնարին հարուածներով ստանեցոյց Պարսկական գահը. սակայն մեր զօրքերը ժայռի պէս անստան մնացին թշնամւոյն բուն յարձակման դէմ. յիշեցին Հայաստանը, աչք մը դարձուցին դէպի հուն, ու իբր թէ նոր ոչ թէ և նոր կրակ մը ժողովելով անկէ իրենց պատին մէջ, ինկան ասիւծարար մակեդոնական խուժանին վրայ և սկսան բխբաւոր մահեր ցանկ կանոն քաղմութեանը մէջ. մոնչեց բարեկամներն Աղքատները ու կարծեց որ այն ատաճին անգամ յաղթութիւնը իբնէ երևալը դարձնէ, որտապոչ ձայնով մը խրախուսեց իւր բանակը, իւր չորս կողմը պատեցան անուանի զօրավարներ, Սերեկոս, Պարմէնիան, Եւմենէս, Կղիտոս, և ինքը անոնց մէջ իբրև պատերազմի սպառազէն Աստուածը Արամեան գնդին վրայ փայտակեց. սակայն մեզմէ ո՛չ ոք գողաց, ո՛չ ոք ստանեցաւ, բազդէն և Աղքատներէն պաշարուած իրենց յաղթանակին մէջ թողուեցան ամէնն ալ. գոյցն մնացորդը զօրաց, աւանգ, միայն կենդանի մնացինք և հայրական դրօշակը թշնամի և բարեկամ աղղաց գլխուն վրայէն փառաւորապէս անցնելով, անա հոս ենք, մեր հայրենեացը ու քու զինացդ արքայ քա՛մ:

ՎԱՀ. — Չեմ ցտիկ բանակին կորստանը վրայ. այդ հարուածը նոր խրախոյս մը կազդէ ինձի վրէժխնդրութեանը և փառաց. Հայոց սակորներովը լեցուեցան Սախոյ գաղտերը. ո՛չ, արցունք չեմ թափեր. կը վազեմ ևս ալ հուն սուրը ձեռքս կարճ ընելու մեր թրչնամեաց նախախնդրներ. վրէժարեք յաղթանակ մը թող չբեղ մահարձան մը սկսուի: Հայաստանի որդւոցը գիտնեցը վրայ. տար թէ ոչ լաւ է իրենց հետ մէկտեղ իջնալ հողին տակը:

ԱՐԳ. — Ժամանակը ստիպողական է արդէն և իրաց հարկը ստգնապող, գիտցի՛ր արքայ, որ Աղքատները մե՛ծ բանակ մը Հայաստանին վրայ յարուցած է որ մեր ետեւէն կը հաննէր. և Հայ մըն է այս բանակին զօրավարը, Արտաւազդ մասնիչը:

ՎԱՀ. — Ա՛հ, անօրէնք ինքը անձամբ ուրեմն կը նետուի իմ կատաղութեանս ճիրաններուն մէջ. գոնութիւն ձեզ անմահ գիր. Հայաստանին և Վանէին վրէժխնդրութեան վայրկեանը հասաւ:

Տ Ե Ս Ի Լ Գ.

ԶՕՐԱԿԱՆ ՄԸ ԵՒ ԱՌԱՋԻՆԿ

ԶՕՐ. — Տէ՛ր արքայ, մակեդոնացի՛ գեապաններ եկեր ներս մանկ կուզեն:

ՎԱՀ. — Թող ներս մանան: (Զօրականը կ'երբայ):

Տ Ե Ս Ի Լ Ե.

ԱՐՏԱՌԱՋԻ, ԼԻՒՍԻՄՈՒԲՈՍ ԵՒ ԱՌԱՋԻՆԿ

ԼԻԻ. — Աղքատները քաջագոր ինքնական մակեդոնացոց իւր Արտաւազդ զօրավարն ու գեապանը Վանէին կը խրկէ. իբնէ պիտի բէք իւր պատգամները:

ՎԱՀ. — Թող կուտամ իրեն որ խօսի. մշայն թէ կարճատու ըլլան Աղքատները զօրավարին խօսքերը:

ԱՐՏ. — Աստուածախոս ինքնական և յաղթողն աշխարհի Աղքատները գիտ կը գրկէ քեզի՛. համար պահանջելու Պարսից հետ ըրած դաշտակցութեանդ համար:

ՎԱՀ. — Աղքատները նախ գիտ իրեն ծառայ ընէ, և կարք ինձի ծառայ մը խրկէ համար պահանջելու իմ գործոյս:

ԱՐՏ. — Աղքատները իր արեւելքաստատ զօրութեանքը կարող է պատահանել իրեն դէմ եղած յանդուգն թշնամանքը. փշբել ձեռքիդ գուազանը և իւր ծառայները քու վրայ տէր ընել:

ՎԱՀ. — Թող կուտամ լսի խօսելու և թէ կարճատու ըլլան խօսքերդ. փութա՛ւ ուրեմն ու մի՛ գեղձանիք իմ երկայնամտութեանս:



ԱՐՏ. — Այո՛, կարճ են Աղէքսանդրին պատգամները և չանթահար զանոնք մտիկ չընողին, և ասոնք են. դուն յանդգնեցար իրեն զէմ զէնք վերջնել Պարսից հետ նրգակակից ըլլալով. փոխարէն այդ ձեռներէջ յանձնապատան խրոխտումիդ, Աղէքսանդր կը պահանջէ քեզմէ անթերի հնազանդութիւն և հարկատուութիւն առ մակեդոնական գահն. մի միայն հակառակ խօսք այս իւր անդարձ պատգամին զէմ աւելի ծանր նախատինք մը կը համարի իրեն, և կընայ գահավիժել զքեզ այդ գահին վրայէն որ հիմայ մեծանձն ներողամբտութեամբ կը հաճի չնորձել քեզի:

ՎԱՀ. — Իմ նախնեաց գահն է ասիկայ, որ ամէն օտար և անիրաւ յարձակմունքները վանելով ստացեր են իրենք. թշնամի ձեռքեր ասոր չի հասած կոտորել ինկեր են ինչուան հիմայ, և իւր վրայ նստողները երգում ըրած են թող չի տալ որ եւ իցէ մէկու մը անպատահաւ մերձենալ իրեն. կարօտ չեմ Աղէքսանդրի չնորձքներուն. և մէկը չի յուսայ որ իմ ձեռքովս ծառայական լուծը անցնեմ այդ ազգին պարանոցը, որ մինչեւ ցարդ արեամբ պաշտպաներ եմ սխերիմ թշնամիներուն զէմ. ազատութիւնը նախ և առաջ մեր անմատոց լեռներուն մէջ սպաստան մը գտաւ. և Հայերը անոր անդրանիկ ծնունդներն են. Վահէ չի կրնար մատնիչ ըլլալ իւր ազգին բախտին ու փառացը. ազատութեան կործանմանը տակ կը ճմիր, բայց ճակատը չի խնարձեցներ հարստանար բռնութեան զէմացը:

ԱՐՏ. — Ապտամբի մը խօսքեր են ասոնք:  
 ՎԱՀ. — (Օրսմեալ եւ յոսս ելանելով) Ապտամբ. ես զեռ իմ սիրոջս ու ազգիս զէմ նրգակս չեմ վերուցեր. սուրը ձեռքս հայրենիքս չեմ արջուկեր թշնամի բանակներու գլուխ անցած. աշխարհաւեր թագաւորի մը գերի եղած իւր բոնակալ բազուկը չեմ ողբեր, որ բնիկ թագաւորիս գլխուն վրայ ծանրանայ. զեռ մատնութեան և դաւաճանութեան սեւ նշաններ աղտոտած չեն իմ վահանս ու լեզուսապար լրբութեամբ չեմ յոխորտար իմ սիրոջս զիմաց:

ԱՐՏ. — Կը մոռնաս որ մեծին Աղէքսանդրի դեպքանին հետ կը խօսիս:

ՎԱՀ. — Իմ ապտամբ ծառայիս հետ կը խօսիմ. դուն յիշեցուցիր ինձի. Աղէքսանդր ինձմէ հնազանդութիւն կը պահանջէ. ես ինչ պահանջեմ իրմէ այս անբաւ նախատանայ փոխարէն. անորէն մատնիչ մը ինձի դեպքան խրկել. զնա՛ պահուրտէ մակեդոնացոյն թեւերուն տակ. զոզա՛, չըլլայ թէ ինչուան վերջը իրրեւ քու աէրդ խօսիմ ու վարուիմ հետդ:

ԱՐՏ. — Հին նախատանայ վրայ աւելի գան նախատինքներ կը յաւելուս, մէկ անիրաւութեան վրէժը տոնելու եկայ ես հոս, ու դուն ըլբարտոր վրէժինդութեանց ճարակներ կը մատուցանես իմ կատաղութեանս. Աղէքսանդրի թեւերուն տակ չեմ ծածկուիր ես, անոր բանակներուն առջեւէն քարելով Հայաստան մտայ ու պիտի չեղլամ անկէ, ինչուան որ Իսսի ճակատամարտին մնացորդները բռնաջինջ չըլլան Հայաստանի մէջէն:

ՎԱՀ. — Իսսի ճակատամարտին մէջ Հայոյ բանակին մէկ ազգիկ մասն էր միայն որ այնչափ սուղ գնել տուաւ. Աղէքսանդրի յաղթութիւնը. հոս բոլոր Հայաստան դահաւարեալ ձեր զիմացը պիտի կանգնի, ու այդ մնացորդները պիտի սորվեցնեն իրեն թէ ինչպէս կ'սպաննուին մակեդոնացիք:

Տ Ե Ս Ի Լ Զ.

ԶՕՐԱԿԱՆ ՄԸ ԵՒ ԱՌԱՋԻՆՔ

ԶՕՐ. — Տէ՛ր արքայ, Հննայ և Աղուանից զօրքերը հասան բաղմութեամբ ըստ քում հրամանիդ:

ՎԱՀ. — Իմ ձեռքիս տակը ժողովեցաւ ուրեմն հայկական համախումբ զօրութիւնը ու պատերազմի կը հրաւիրէ զիս. (սուրբ հացնելով, նոյնը կրնե՞ն ամենն ալ) պատերազմ մ' Արտաւազդ, անիրաւութիւնուն զէմ, և պատահաւ դաւաճանայ գլխուն վրայ, կը մաղթեմ ամենայն բաղդից աէր անասանելի ճակատագրէն. Մասեայ ապառաժներուն կ'սթնած կ'արհամարհներ բանութիւնն ու ազգապառմանութիւնը:

ԱՐՏ. — Աղէքսանդրի բարկացայտ շանթերը պիտի չուշանան Մասեայ խրոխտ կոտախուռքը զարնելու իմ ձեռքովս: (Երբայ Լիւսիմաֆոսին հետ):

ՎԱՀ. ԵՒ ԱՅԼ.Բ. — Պատերազմ, պատերազմ:

ԱՐԱՐՈՒԱԾ Բ.



Տ Ե Ս Ի Լ Ա.

Վ.Ս.Հ.Է. ԳԱՆԻ ՄԸ ԶՅՐԱԿԱՆՆԵՐՈՎ.

Վ.Ս.Հ. — Ո՛հ, թշուառ արչարոյ: խորտակումն զմնդակ. անօգուտ եղան ամենայն քաջութեան հանդէսներ անխիբ բազմութեան զէմ. կարծես թէ զժոխք նոր զօրաց զունդեր զուրս կը ժայթքեն ինձի զէմ. դառնամ Արմաւիր, ու ինչուան վերջին շունչս պաշտպանեմ հայրենի պարխայները:

Տ Ե Ս Ի Լ Բ.

ԼԻՆԱԾՄԱՔՈՍ ԵՒ ԳՈՒՆԳ ՄԸ ՄԱԿԵԳՈՆԱՅՈՒ ԶՅՐԱԿԱՆՆԵՐ

Լի. — (Կը յարձակի Վահէին զիմ) Զգէ՛ սուրբ ու անձնատար եղիբ:

Վ.Ս.Հ. — Ո՛հ կրէք. (Կը կռուի քաջութեամբ, Հայր կը փախչին):

Լի. — (Եւ բռնը զօրհեր Վահէին վրայ կը վերցնեն սուրերնին) Խնորհեցե՛ք ձեզ, քանզոքի անուան զիմացը:

Վ.Ս.Հ. — Վահէին ձակասը մահուան զինացը անգամ չի խնորհիր:

Լի. — (Եւ զօրական) Մեռի՛ր ուրիշն:

Տ Ե Ս Ի Լ Գ.

ԱՐՏԱՒԱԶԳ ԵՒ ԱՌԱՋԻՆԵՐ

ԱՐՏ. — (Նեռուկն) Ի՛նչ կլնէք. մինակ թշնամու զէմ բազմութեամբ կտուի չի վայելիր Մակեդոնեան քաջերու. Ի՛նչ կը տեսնամ. զուն վահէն:

Վ.Ս.Հ. — Ի՛նչ ձայն է որ կը բնմ:

ԱՐՏ. — (Կատարութեամբ) Ո՛վ ուրախութիւն, զուն իմ ձեռքս ես. մի միայն արժանիք մահու մահկանացուաց մէջ. հարար թագաւոր, կերծանիչ Հարստանի, անագորոյն հայր, որ յաւերժ արտաուաց դատաւարուց իւր միակ աղջիկը. չարեացաւորաց իմ ցուցս եւ աղետից. այժ, զո՛ւն ես, այն որ նպատակ պիտի ըլլաս զինուցս կատարութեանը:

Վ.Ս.Հ. — Եւ զու թշնամի հայրենեաց, հր սակաց զուրս եւ առաջնորդ, քու անդամ մասնութեանդ վրայ կը պարծիս:

ԱՐՏ. — Իմ երիտասարդական աշխոյժ եւ բարերաստ տարիքիս սիրեցի այդ հայրենիքը, որ հիմա կտորածով եւ արեամբ կը լեցնեմ, պատանի հասակէս ի վեր քեզի նեւ մէկտեղ պատերազմներու մէջ ուսաց, փառաց ստապրեղներու մէջ արչաւել. քաջ անունը որ ինձի կուտային ամէնքը, անյուր քաղցրութեամբ մը կը լեցնէր սիրտս. քու թշնամիներդ ինձմէ աւելի անաւոր հակասակորդ մը չունէին, եւ զքեզ կը մեծարէի իբրև զիւրացն թագաւոր մը:

Վ.Ս.Հ. — Ու կը մտնաս իմ մեծապարգեւ բարեգներս, որով վարձատրեցի քու քաջութիւններդ:

ԱՐՏ. — Նենգամիտ թագաւոր, իբրու է զուն այն ստեն չի համարձակեցար երես զարնել իմ անչուք ծնունդս. բայց խարերայ էին զխտումներդ. կապտելի յանցանք մը գտնելու իմ վրաս, թրչուատութեան բաժակը իմնոյ տայու համար ինձի. քու աղջկանդ Արուսեակին համար ամբիժ սիրով մը վատուելու մեծ ոճիր մը համարեցար զուն, եւ Հայոց քաջագունը չղիմաներով կապուած անարգարար խոր բանտերու մէջ նետուեցաւ. եւ ս՛վ ան ստենը սուրը պատեանին հանեց իմ պաշտպանութեանս համար... ս՛չ որ. այն ստենը մըշտարորբք ատելութիւն մը երգուեցաց իմ ազգիս զէմ, օղնականութեամբ զից եւ իբր թէ սքանչելիօք փախաց իմ բանտէս. Յունաց աշխարհը հիւրնկարեց զիս. իմ ազգէս աւելի օտարները մարդատէր զբոնտեցան ինձի. Աղէքսանդրին նուիրեցի այդ սուրը, որուն զէմ այնչափ սպիրալստ գանուեցան հայրենիք. ու տես թէ ինչպիսի հօր բանակի մը զօրավար եղամ՝ իւր եւ իմ վրէժս կը լուծեմ միանգամայն:

Վ.Ս.Հ. — Ո՛վ ժպիրճ յանդգնութիւն. ու զքեզ յափշտակելու համար չի բացուիր դեռիցը. նենգախոսչ սուրբ կը մղես ազգիդ սիրտը, ու ամօթը ձակասիդ վրայ դարկանար նշան մը չի գրոջմեր:

Հայաստանի բախտին վրայ չեմ գողար ես, երկինք թերեւս պաշտպան կենան իրեն. արեանս մէջ յագեցուր քու շարատանջ ճարագ. կենացս գործերը բաւական վիճակներ են իմ փառացս. քեզի պէս մահաթոյն իժ մը ծոցիս մէջ սնուցանելը մի միայն ոճիրն է որ կը պղծէ իմ համբաւս, մի միայն խայթոցը, որ շարաշար պիտի տաղնատէ վերջին օրնատական շունչս, գարկ, ո՛վ կարգիլէ բազուկդ. մէկ հարուածով պատուհասէ՛ ատտաշնարճ սքարգեւները որ այնչափ աստն անօրէն դիտուղ վրայ թափեցի. անս, ասոնք են այն տեղերը ուր դուն դեռ ցածաղցի դօրական մը խառնիճազանճ ամբոխի մը մէջ խառնուած էիր. այս ապառաժները լսեցին իմ ձայնս երբ գրեզ այդ անչուք վիճակէն բարձր պաշտօններու կոչեցի. խարուեցայ քու անվեճեր կերպարանքէդ ու քաջութիւններէդ, և քեզ հաւատարատպատիւ բրի թորգոմեան բարձրագահ իշխանաց. Արտաւա՛զդ մինակ չի կրնար մասնել զիս կրտէի, վասնզի քաջ ու անկեղծ սիրտ մը ունի և չառ վայելեց իմ բարիքներս. աւա՛ղ, աղնտալի կուրութիւն. երբ դուն մտնալով քու վիճակդ, մոռնալով իմ արքայական վիճակս, աստիճանս, յանդիմեցար իմ աղջկանս վրայ աչք վերցնել. այն ատենը բացուեցան աչքերս ու ականջ փառամոլ խորհրդոց նպատակը. մերժեցի քու խնդիրքդ ու դուն մէկէն գաւաճանութեամբ և մասնութեամբ ուղեցիր վրէժդ ամուսլ:

ԱՐՏ. — Վաս թշնամիներու նախանձարեկ շարութիւնը ժարհեցար արատաւորել իմ համբաւս, ու դուն այնչափ զխրահառան գանուեցար որ չեմ գիտեր թէ քու՝ չէ նէ ուրիշէն անդգամութիւնը առաւել թշուառացուց զիս, գաղտնի գրացում մը կարծես թէ կը զրդէ զիս մեծարել զեռ իմ թագաւորս, գրեզ անմեղադիր ընել խարուած կարծելով, կարնկցութեան, քան թէ ատելութեան արժանի կուզեմ գատել գրեզ, ստիպն, աւա՛ղ, գրեզ ատելու կտտիպէ զիս քու աղջկանդ յիշատակը. ուրախացիր սրտիս տանջանքները տեսնելով... չեմ համարձակիր անոյ վրայ լուրեր հարցնելու քեզի. կը վախնամ մահարեր ցաւոց և կրատագութեան մէջ կորնչելու. ուր է ինքը. ո՛ր գագանին ճիրաններուն մասնուեցաւ այդ փափուկ սիրար. արդեօք սուրբ՝ չէ նէ թոյ՛ր ցամքեցուց իւր աշուրներուն արցունքները որ իմ յիշատակէն վրայ կը հասէին. խօսէ՛, մտած է ինքը ու պէ՛տք է որ իւր գերեզմանին վրայ քու արխնոց ցօղեմ:

ՎԱՆ. — Կենդանի է ինքը. բայց քեզի համար չէ:

ԱՐՏ. — Կենդանի է. ո՛հ, պիտի տեսնամ զինքը, պիտի յա-

փշտակեմ զինքը խաւարալին բանտերուն մէջէն ուր թերեւս քու անդթութիւնդ զինքը թաղեր է:

ՎԱՆ. — Իւր ամենազօր պահապանները մէկ անխորկութեամբ կրնան մոխիր դարձնել գրեզ քու բանտակով հանդերձ. անլուծանելի և անուտր կապով մը...:

ԱՐՏ. — Որո՛ւ հետ միացած է:

ՎԱՆ. — Ատտուածոց հետ:

ԱՐՏ. — Ո՛վ երջանկութիւն, Արտաւազդէն ի դատ ոչ ոք ուրեմն արժանի գանուեր է Արուսեկին սիրոյն:

ՎԱՆ. — Ո՛չ, անտի յոյսերով մի՛ խաբեր քու ամբարառատութիւնդ, Արուսեակ կատէ գրեզ այն օրուրնէ ի վեր որ դուն իւր հօրը՝ զեմ անօրինեցար, ու հայս պիտի երթար Արմայ թագաւորին, թէ որ անիկայ յանկարծադէպ մահուամբ դերեզման չի՛նար. ուրիշ արքայական ամուսնութիւն մը ստաջարկեցի իրեն, բայց սաքս իշնարով արտասուալից, ա՛հ, հայր իմ գօշեց, թոյլ սուր որ Ատտուածոց նուիրեմ այդ կեանքը որ երկրիս վրայ երջանկութեան համար ճակատագրեալ չէ. երկայն ատեն զեմ կեցայ իւր խորհրդոցը. բայց վերջապէս անճար եզաւ փոխել զինքը իւր մօրէն. Սօսեաց անտաններուն մէջ ստանձնացած քեզի արամութեամբ իւր օրերը կանցնէ, մտնալով գրեզ ու յիշելով քու ոճիրներդ:

ԱՐՏ. — Իմ սէրս միայն կը յիշէ ինքը, ու անոր յիշատակովը կ'ապրի. այդ սեւ անտաններուն մէջ իւր ողբական մրմունջները Ատտուածոյ կը թուցնէ ու սիրան ալ ինծի:

ՎԱՆ. — Իւր սիրար մի միայն Ատտուածոց նուիրեալ է. փաճ անկը ուղեցի համոզել զինքը գառնալու աշխարհէս բերկրութեանցը մէջ, սակե՛նուս գարգեր ու գոճարներ կը փայլէին իւր զիմացը. պարտապ անկը նկարագրեցի իրեն զխոյտութեան չքեզ վիճակը, և մայրական քաղցրութիւնները, սիրուն սրբեկաց գգուանացը մէջ. բարկութեամբ սուրի ստակ ատաւ այդ փառաւորութիւնները, սեւ սոյոց զգեստ մը ատաւ վրան ու գետնի վրայ սուրածուերով երկայն ատեն լուս կեցաւ... ևտըր լսեցի իւր չըթունքներուն իրարու բարախիլը... թշուատ աղջիկը իւր հօյր գլխուն վրայ Ատտուածոց օղնականութիւնը կը մաղթէր ու իրեն համար ալ մահ... (ալլալլա՛ծ):

ԱՐՏ. — Դուն զինքը հարսանեկան վարդերու մէջէն յափշտակելով սոյոց և մահուան արամութեանցը մէջ թաղեցիր. ես կը հաւկրնամ այդ անմեղ չըթունքներուն խօսքերը. կը բողբեր յերկինս

անդուծ հօր մը գէմ որ իւր գեղեցիկ օրերը թունաւորեց . կը փախ-  
չէր իւր բռնաւորին ձեռքէն ներելով անոր . ու մահը կը խնդրէր ,  
մահը , այն յետին ապաւէնը անյոյս տարփաւորին , որ սիրով կը  
տոչորի ու չի կրնար խօսիլ , վատարագոյ օրիորդ , չէ , թող պիտի  
չի տամ որ ստակալի անտանները յափշտակին ընութեան ձեռքէն քու-  
ծաղիկ երիտասարդութիւնդ , գեղեցկութիւնդ ու սիրոյ համար ստեղծ-  
ուած այդ ամենափափուկ սիրտդ . դուն իմն պիտի ըլլաս , ո՛ր Արուս-  
եակ :

ՎԱՀ . — Յտառ ջրան քուկդ ըլլարու , գերեզմանին աւար պիտի  
ըլլայ Արուսեակ , թէ որ բազուկներ պակսին զինքը քու ձեռքէդ ա-  
զատելու , բոցերը կը լափեն անտառին ծառերը ու անոնց հետ մէկ-  
տեղ Արուսեակն այ :

ԱՐՏ . — Իմ Արուսեակս բոցերու մասնուած , ա՛հ , ծանօթ է  
ինձի քու կատարութիւնդ . գնա՛ վազէ՛ ո՛ր Լիւսիմաքոս Սօսեաց ան-  
տառը , հնչեցո՛ւ Աղէքսանդրի աճաւոր անունը Հայոց պահապան դօ-  
բաց մէջ . զբուցէ՛ որ յանձնեն քու ձեռքդ Արուսեակը , դողան իմ  
սպառնալիքներէս . ըսէ՛ որ սուրս կախուած է Վահէին գլխուն վրայ ,  
հիմնայտառակ պիտի կործանեմ Արմաւիրը , ձերն ու մանաւոր , այր և  
կին ոչ սք պիտի գերծանի ստակալի բարկութենէն . փութա՛ ժամա-  
նակ մի կորսնցներ :

ԼԻԻ . — Կը վազեմ քու հրամանդ կատարելու . (Կերթայ) :  
ՎԱՀ . — Վահէին որդին հո՛ն է ու պիտի գիտնայ իւր պարտքը  
կատարել :

Տ Ե Ս Ի Լ Գ .

ԶԱՐԲԱԹԻ ԵՒ ԱՌՍՋԻՆԻ

ԶԱՐ . — Հայր իմ . . .  
ՎԱՀ . — Ի՞նչ կը տեսնամ , այդպէ՛ս կը կատարես հօրդ պատ-  
ուէրը , այդպէ՛ս անպաշտօրան կը թողուս քոյրդ անօրէն թշնամեաց  
ձեռքը :  
ԶԱՐ . — Իւր կողմանէ ձեզի կուգամ ես հայր իմ , պատերազ-  
մին տարսափը ինկաւ Սօսեաց անտառներուն վրայ . այն սուրերը որ  
այնչտի Հայ քաջերու արիւնը խմեցին , աւելի սուր հարուածներով  
մինեցան Արուսեակին սրտին մէջ . ա՛յ չուզեր սպրիլ իւր հօրը ու Հա-

յատանին թշուառութեանը վրայ . սղառեցան արտասուքը աչուրնե-  
րուն մէջ , ու ցաւոց բռնութենէն կիսամահ գիրկս իցնալով , գնա՛  
բաւ , ո՛ր , Զարմայր , գնա՛ իմ հօրս ու Արտաւազին , ըսէ՛ իրենց որ  
իրարու արեան ծարաւը չի յագեցուցած , թող դան տեսնան Արու-  
սեակին մեռնիլը , վկայ ըլլան իւր օրհասական ցաւոցը , ու անկէ ետքը  
անոր դիակին վրայ արիւնարբու սուրերնին իրարու սիրտը մխեն .  
ա՛հ , թէ որ տեսնայիք այդ թշուառ օրիորդին աղեկէզ վիճակը , իւր  
զալկահար ձակասը , գունատեակ շրթուները , այդ երկնային գեղեցկու-  
թիւնը որ թառամելու վրայ է յուսահատութեան ժանտաբեր չնշովը ,  
ս՛հ , անշուշտ եմ որ ատելութիւնը սիրոյ և գթութեան պիտի փոխ-  
ուէր սրտերնուդ մէջ :

ԱՐՏ . — Ո՛ր Արուսեակ , Արտաւազին օղնութիւնը չուշացաւ  
հասնելու քեզի . Լիւսիմաքոս ժամանակին պիտի հասնի :

ՎԱՀ . — Ու այս ամէն աղեկից դու ես չարեացապարտ , եղիւ-  
նաւոր և անզգամ գլուխ , եթէ տունս փլաւ ու գանս կործանեցաւ ,  
բայց ատելութիւնս կենդանի է սարսուռ վաղցնելու համար քու ե-  
րակներուդ մէջ : Ու չիմացա՛ւ Արուսեակ (Զարմայրին դառնալով)  
որ իւր հօրը ու Հայտատանին թշուառութիւնը այս դաւաճանին  
վատ սրտէն դուրս սողացին . չիմացա՛ւ որ անիկայ է իւր ձակալին  
վրայ յուսահատութեան ժանտաբեր շունչը փչողը , իւր գեղեցկու-  
թիւնը թուամեցնող դարանամուտ սրբը , ո՛վ է որ Արուսեակին կենաց  
վտանգովը կուգէ սարսափ ազդել ինձի , ու անոր ցուրտ դիակին  
քովը կը հրաւիրէ զիս ու հայրենասպան չարագործ մը . և սակայն  
չէ թէ մէկ աղջկան , Հայոց անբաւ դիակներ տարածուած են բոսո-  
բաների գետնին վրայ , ու անոնց վերքերէն ելած ծխախտան արեանց  
չողին կայծակնացայտ կը սրտեն ամգարչայն գլուխը , ու անիծից  
վուշեր կը խայթեն իւր սիրտը :

ԶԱՐ . — Հայր իմ գլխա՛ . . .

ՎԱՀ . — Մէկդի գնա՛ , անարժան որդի Վահէի . հիմայ Արուս-  
եակ քու պատճառովը թերեւս գազան թշնամեաց ճիրաններուն կը  
մասնուի :

ԶԱՐ . — Քեզի կը դառնամ ո՛ր Արտաւազը , եթէ հայրս այսչափ  
կանգթամայ իւր սրբուցը գէմ , գոնէ դուն գլխա՛ մեզի , յ՛չէ որ Ա-  
րուսեակին եղբայրն է քեզի ազաչողը :

ՎԱՀ . — Կը մոռնամ ուրեմն Վահէի որդին ըլլալդ . Արտաւազ-  
դին ազաչողը իւր հօրը ու հայրենացը մատնիչ է :

ԱՐՏ. — (Զարմայրին թեւեւ բռնելով) Եկու թշուառ սրտանի, Արտաւազգին բազուկը պիտի սրաչտարանէ գրեց անպուժ հօր մը մուկնութեանը դէմ:

ՎԱՀ. — (Միւս թեւեւ բռնելով) հրապուրել կուզես նաև իմ սրբիս, այն անզգամ:

ԱՐՏ. — Դողս՝ իմ բարկութենէս...

ՎԱՀ. — Ո՛չ, թող չեմ տար...

ԱՐՏ. — Զօրակա՛նք:

ՎԱՀ. — (Եւրբ Զարմայրին կուրծքին վրայ դնելով) Մէկը չի մօտենայ. եթէ չեմ կրնար ազատել սրբիս դաւաճաններու ձեռքէն որ կուզեն մատնիչ ընել զինքը իրենց պէս, և անշուշտ սուր մը պիտի տան ձեռքը իւր ազգին դէմ զարձնելու համար զայն, լաւ է որ հիմակուցնէ իւր արիւնը թափուի:

ԱՐՏ. — Կեցի՛ր Վահէ, հեռացէ՛ք դուք իրմէ՛ գօրականք, մի մըսնց Արուսեակին սէրը բռնն զօրութեամբ կատարէ զիս քիչ մը առեն ամեն իմ բարկութիւնս, սրբէս զի նոր խոցերով չի վիրաւորեմ իւր սիրտը. բայց չէ թէ կազաչեմ քեզի...

ՎԱՀ. — Չն՛ս աղաչեր ինծի. այ՛ս, ծուար զիր քու թագաւորիդ գիմացը, աղաչէ՛ իրեն, աղաչէ՛ Հայաստանին որ ներեն անձան ոճիրներուդ ու դժոխոց խաւարին մէջէն գրեց իւր ս վերակոչին. ահաչէ Սասուածոց երկնից որ սրբար վրէժինդութիւնը գինաթափ բլրայ ու բռնան իրենց գլխութեանց աղբիւրները բիւր եղանացդ ապահանութիւնքը սրբելու համար:

ԱՐՏ. — Խրոխտ թագաւոր, որ գահիդ բեկորներուն մէջէն խիզախելով կը գրգռես աւելի գրեց սրտուհասող ձեռքը, թէ որ կատարութեանս բոցերը ինչուան հիմայ գրեց մոխիր չի զարձուցին, ա՛հ, Արուսեակն է մի միայն սրտածառը. տոկոցի՛ր, չբլրայ թէ մտնամ վերջապէս իրեն հայրը բլրայ:

Տ Ե Ս Ի Լ Ե.

Լ Ի Ի Ս Ի Մ Ա Ր Ո Ս Ե Ի Ա Ռ Ա Ջ Ի Կ

ԱՐՏ. — Մի՛նակ կը դառնաս Լիւսիմաքոս:

ԼԻԻ. — Ինչպէս որ հրամայեցիր, գունդ մը զօրքով հասայ Սօսեաց անտառը, Աղէքսանդրի անունը հնչեցուցի, ու ըսի որ չտուով յանձնեն ինծի Արուսեակը, սպա թէ ոչ Արտաւազգին բարկութեան վախմտան: Անտառին սակաւաթիւ պահապան զօրքերը առ սչինչ գրելով իմ ապանայիքներս, սկսան նետեր ու նիզակներ տեղալ մեր վրայ. ան առներ յարձակեցանք անոնց դէմ ու սաստիկ պատերազմով վանեցինք զիրենք ու փախչողներուն կտուէն մտանչ մինչև անտառին խորքը. մէյ մէն այ աղջիկ մը անտուեցաւ հետուէն որ մազերը ուտերուն վրայ թողուցած յետահատ կերպարանօք և ցաւազին հեծութեանց ճայներով խոտլած ու տարտախած սողիս անզին կը վազէր ցնորեպի մը պէս. իւր ազնուական ու չքնաղ գէմքէն իմացայ որ ինքն էր Արուսեակ:

ԶԱՐ. — Իմ անձկալի քոյրս:

ԱՐՏ. — Ասա՛յ տար խօսքդ, Արուսեակ:

ԼԻԻ. — Հրաման տուի զօրացս որ վազեն բռնեն զինքը. բայց յանկարծ անտառէն դուրս փողերու ճայներ լսուեցան, ու ձիերու ռաթից արտիւնքը. սուրեր ու վահաններ շառաչեցին, և մոկեցին ազազակներ երկնքը բարձրացան. ես զարձուցինք աշունիս ու տեսանք որ սրաչտարած էինք կանրկէն Արգուարդայ ու Վարսժայ զօրքերէն. հարկ եղաւ մեզի անոնց մէջէն սրով ճամբայ մը բռնայ, բայց առանգ, մագմէ՛ շատերը ինկան քաջութեամբ այդ արիւնասեղ կուսին մէջ:

ԱՐՏ. — Ո՛վ կատարութեանս, քու վրայ պիտի թափեմ նախ վրէժինդութիւնս, ետքը Արմաւիր մոխիր պիտի դառնայ. կորուսի անմեղը յանցաւորին հետ, անհետ բլրայ Արուսեակին յիշատակն ալ, բարկութիւնը միայն խօսի մահապէն քաջին սիրտը. իմ սիրտդ ձեռքէն յախչակեցին գրեց ո՛ Արուսեակ, անոնց հետ պիտի կտրիս իննաս դուն ալ. թէ որ դուն իմինս չես, ոչ ոք, և ոչ իսկ Սասուածները պիտի վայելեն գրեց. մեռէ՛ր դուն... Ինչ կըսեմ, ո՛վ դառնութիւն. ա՛հ, չէ, սպրէ՛ թշուառ օրիորդ, ու առ անպուժ մի՛նակ հասուցանէ

բարձր վրէժը . զօրականք , սարէք զինքը բանակին մէջ , վաղը Ա. ղէքսանդրին բերնէն պիտի լսէ իւր յետին վճիտը :

ՏԵՍԻՂ Զ.

ՅՈՅՆ ԶՕՐԱԿԱՆ ՄԸ ԵՒ ԱՌԱՋԻՆԷ

ԶՕՐ . — Իշխանդ քաջ , Հայոց զօրաց բազմութիւնն մը հոս մեր վրայ կը յարձակի , և բանակին մէջ ձայն մը տարածուեցաւ . թէ քաջայայտ ինքնակալն մեր Աղէքսանդր մնծ բանակի ինքը անձամբ Հայաստան կուգայ :

ՏԵՍԻՂ Է.

ԱՐԿՈՒՍԵՐԳ, ՎԱՐԱԺ, ՀԱՅ ԶՕՐԱՎԱՐԷ ԵՒ ԱՌԱՋԻՆԷ

ԱՐԳ . — Ահա հոս ենք մենք , տէր արքայ , ստակին թշնամիները :

ՎԱՀ . — Առ իս քաջքդ իմ , դեռ կորսուած չէ Հայաստան . աննկուն քաջութեամբ սահպենք բազըր յաղթութեան ձամբայ մը բանակու մեր դիմացը :

ՎԱՐ . — Քեզի հետ ենք տէր , մէնչեւ ցմահ :

ՎԱՀ . — Եկէ՛ք ինձի հետ . սուրբ է այս պատերազմը թէև մեր կեանքերը հնձէ :

ԱՐԳ . — Զօրականք Մակեդոնացիք , վազեցէ՛ք կրկին ա՛գամ յանդգնութիւնը պատժելու , վազեցէ՛ք գործնեալ փառայ և յաղթութեան : (Յուճաց զօրքե ցեռս կը վազին , Հայք անոնց վրայ կը յարձակի) :

ԶԳԻ ՎԱՐԱԳՈՅՐՆ

ԱՐԱՐՈՒԱԾ Գ.

Բ Ե Ր Դ

ՏԵՍԻՂ Ա.

ԱՐՑԱՒԱՋԻ, ԼԻՒՍԻՄԱՒՈՍ

ԼԻԻ . — Հոս քիչ մը ոգի անուսը ո՛ր Արտաւազդ , պատերազմաց յոյնութեանն :

ԱՐՏ . — Ինձի համար ա՛լ հանդիստ չկայ . անձանթ է խաղաղութիւնը յուսարեկ սրտիս , մտանիչ հայրենեացս , սպասամբ իմ տիրոջն դէ՛մ , ձեռքս եղբայրասպան սուր մը կրելով , գանձ արիւնսարբու հայրենեացս աւերակներուն վրայ մահ գտալով . այս ամէն ոճիրները կը յուսայի փառաց շողշողուն քողին տակ ծածկել , և սակայն սխերիմ բազըր զայն ալ նախանձեցաւ ինձմէ . Վահէ կապանց յաղչտակեց Արտաւազդին ձեռքէն այդ փառքը , ու Արուսեակը հոս չէ որ պիտի ըլլայ այնչափ աղետից :

ԼԻԻ . — Սակայն Աղէքսանդրը պիտի չուշանայ մեր պարտութեան վրէժը անելու :

ԱՐՏ . — Ի՛նչ պիտի պատասխանեմ Աղէքսանդրին երբ խնդրէ ինձմէ իւր քաջագունդ բանակը , զորն որ խոտացայ յաղթական գափնիներով իրեն զարձնելու . Վահէին սուրը հնձեց զամէնն ալ : Աղէքսանդր գիտեմ որ իւր զօրաց կորստեանը վրէժը պիտի տունէ , բայց յաղթութիւնը իրը պիտի ըլլայ և ոչ Արտաւազդին . իմ գլխուս վրայ եղբարցս ստեղծութիւնը պիտի աւերայ ստորին անարդարութիւնն ալ :

ԼԻԻ . — Յաղթութիւնը քուկդ էր եթէ յանկարծ չհեռանայիր դուն պատերազմի դաշտէն . մեր զօրքերը անպուխ մնալով չփոթեցան ու չի կրցան դէ՛մ դնել Հայոց :

ԱՐՏ . — Օրհասարեւր մտտախուզ մը պատեր էր միտքս պատերազմին անեղ խառնուրդին մէջ . խառնաձայն ազաղակք , նիղակնուրու և սուսերաց շառաչմունք երկինք կը բարձրանային գլխուս վրայ փլչելու ու զիս բիւր անէծքներով ու մահերով անհետ ընելու երկրիս :

երեւելն, զոչ առին ոսկորներս, քսանմեկցան մաղերս. զոչոչջ քայկերով հեռացայ բանակէն. անողոր ճակատադրին երկաթէ ձեռքը կը հալածէր զիս, բազմութիւն մը ձերոց և աղայոց, կանանց և օրիորդաց ողբական ձայներով չորջ պատեցին զիս. տե՛ս քու ծննդեանդ տեղերն են սասնք, կըսէին ինձի, զոր թշնամիին ոտքերը կը կոխեն հիմայ. մեր երխատարբ որդիքը և նորասրակ սամախնք ինկան զունդադունդ հայրենեաց պաշտպանութեանը համար. փութմա՛, վազէ՛, խառնուէ՛ զուն ալ նահատակաց խմբին մէջ. ի՛նչ, ես անոնց խմբին մէջ խառնուի՛մ, ե՛ս որ իրենց արեամբը թաթխուած եմ. այն ստերը իմ ամէն ոճիրներս զմնեատել իմ զիմացս կանգնեցան: Աբուսեակ, գոչեցի, քեզի համար այս սեւ անդրոց մէջ զբարեցայ. սի՛ն, զուն ինձի գլխած ձեռք մը կտրկտա՛, ու ցնորեալ կատաղութեամբ վազեցի Սօսեաց անտառը, տեսայ Աբուսեակը գետնի վրայ տարածուած ու չորս կողմը պատեր էին քրմերը. սի՛ն, իւր կուսական ճակտին վրայ մահուան ձեռքը գպեր էր, անմուռն էին կապուածակ չրթուները, ու իւր ամբիժ հոլին օրհասական ժամուն հեա կը մարտէր. նուաղեալ աչուքները ինձի գարցուց, տեսու զիս, սարսուտ մը պատեց զինքը, ու աչուքները գոցուեցան յախտեան. սի՛ն, չեմ գիտեր թէ զիս տեսնողուն ուրախութիւնն թէ ալբամութեան անհուն զգացումն էր որ օջեց իւր կենացը սակայձեալ լոյսը շիջուցանել բորբոսին: չեմ գիտեր թէ այս յետին նայուածքը սիրոյ կէ՛թէ դասն կշատմանաց նայուածք մըն էր. խոյս սուի անարեկ մահուան գիմայէն, և յուսահատութեանս մանջիւնները հնչեցին խոր անտառին մէջ:

Լիի. — Փարտա՛, ս՛ Սբառաւազը, մարիկ շիտխութիւնը. իբրուունք ունէիր սուրբ Հայաստանին վրայ վերցնելու որ այնչափ նախաանց զքեզ, ու ամենայն չարեաց պարտական Վահէն է, չէ թէ գու:

ԱՐՏ. — Երանի թէ ինչուան վերջը հաշտ մնայի Հայաստանի ու Վահէին հեա. երբ անտառէն դուրս ելայ՝ մտայ Հայոց գերեզմանաց դաշտը, ծանրարեկ զուխո հանդէպուցի մէկ գերեզմանական քարի մը վրայ. ս՛վ աղետոցս, ճանչցայ իմ ծնողացս չրբիմը, կարծեցի որ հողուն տակէն անէժքներ կարձկէին ինձի գէմ, և անա իւրաքանչիւր գամբաններուն վրայ հոկայարար կանգնեցան զարկածար ուրուականք զուշտանց Հայոց, որ իրենց սեւ պատանքները օդոյն մէջ ծածանելով մահ կը արեւէին զլիտուս վրայ. ուրիշ բիւրուար ար-

իւնտո ստուերներ հեռամուտ ըլլային ինձի ողբաձայն աղաղակներով, մայրերը իրենց դեռածին որդեկաց զվակները գգուելով կը ջանային զանոնք արթնցնել ի լոյս կենաց. իմ սուրս հնձեց բոլոր ազգի մը այդ գեղեցիկ բողբոջները ու դեռ կենդանի եմ... սի՛ն, անդէտ էի իմ ոճիրներուս, խաւարալին ոգի մը պատեր էր միտքս. ս՛վ հայրենի բնադաւաւք, նուիրական օթեւանք իմ հարցս և ազգայնոցս, զձեզ ծուր գնելով կը պաշտեմ ես. (ծուցկ կը չոփ):

Լիի. — Ի՛նչ կրնես, կը մտնաս Յունաց հեա ըլլալ:

ՉՕՐ. — Մասնիչ մըն է, թող մեանի:

Լիի. — Քու հաւատարիմ զխնորներդ տե՛ս ի՛նչպէս զբոսեցի՛ր քեզի գէմ. ձեզի կրեսմ, յարգութիւն առ զօրավարն մեր, վշտաց դառնութիւնն է իւր չրթանցը թերաղբ:

ՉՕՐ. — Ա՛լ ինքը Աղէքսանդրի զօրավարը չի կրնար ըլլալ:

ԱՐՏ. — Անէժք իրեն, ձեզի, իմ անձին, ատերութեանս ու քինախնդիր սխտութեանս, պատասեցէ՛ք զիս հոս, դաւածանը դաւածաններու ձեռքով թող սատկի. զարկէք:

Լիի. — Ոչ որ մերձենայ իրեն. կէ՛թէ յանցաւոր է՝ Աղէքսանդրին կէրտայ զինքը պատժելը. տանինք զինքը մեզի հեա. պատերազմաց աղմիին մէջ կը յուսամ որ վերտաին կը յիշէ իւր քաջութեան ու հաւատարմութեան պարտքերը:

ԱՐՏ. — Ի՛նչ, զիս յախտակել կուզէք այս տեղերէն որ Աբուսեակին հայրենիքն է և ուր որ ինքը իւր վերջին շունչը արձրից. մի՛ մօտենար ինձի անօրէնք, անա ոտքիս տակը կառնեմ Աղէքսանդրին ձեռքէն ընդունած զօրավարութեան ծիրանին որ մասնութեանս ծալքերուն մէջ պատեց զիս. Աղէքսանդր իւր ազգին տէրութիւնը տիկեղերոց վրայ տարածեց, ես իմ ձեռքովս ուղեցի քանդել իմ ազգիս տէրութիւնը:

ՉՕՐ. — Մեռիր:

Լիի. — Ո՛չ, երդում բրած ենք իրեն հնազանդելու:

ԱՐՏ. — Կը լուծեմ զձեզ ամէնքնիդ ալ այդ երդումէն. վաստիրութեանս անյաղ ցանկութեանը անսպառ նիւթ մատուցանող սիրոյս բոցերն աճիւնացան. հոս կորսնցուցի Աբուսեակը, հոս դաղբեցան իմ ամէն յոյսերս, գորութիւնս և վատաց ու արեան ծարաւ. ճակատազրո կատարուեցաւ, պէտք է որ մեռնիմ (կուզե՛ք զարնել ինձգիներ, Լիւսիմաֆոս կառնե՛ սուրբ Նեոֆե( ) անդու՛թ բարեկամ, կուզե՛ս որ հոս անխտունակ մահուամբ վերջ տամ իմ կենացս, և

հրկիզեալ քաղաքին լուս պարսպացը վրայ հողթաւալ տարածուի  
գլխաւ , և գուցէ օշը ցնդին իմ մոխիրներս :

**ՏԵՍԻՆ Բ .**

**ՅՈՅՆ ԶՕԲԱԿԱՆ ՄԸ ԵՒ ԱՌԱՋԻՆԻ**

**ԶՕԲ .** — Աղէքսանդր ինքնակալն մեր , մեծ բանակով հասաւ  
յանկարծակի և յարձակեցաւ Հայոց վրայ . պատերազմը սկսած է .  
թագաւորը կը հրամայէ ձեզի իրեն հետ գալու միանալու :

**ԼԻԻ .** — Երթանք , ուր որ մեր ինքնակալին ձայնը գմեղ կը  
կոչէ . հոն է յաղթութիւնը :

**ԱՐՏ .** — Հո՞ր պիտի գանամ ես մահը : (Կերբաց) :

**ՏԵՍԻՆ Գ .**

**ԶԱՐՄԱՅԸ**

Պատերազմը սկսաւ , գուցէ վերջինը , որ պիտի որոչէ իմ հօրս  
ու Հայաստանին բազը , ու հայրս թոյլ չիտար ինծի որ այդ աճեղ  
վայրկենին իր քովը գտնուիմ , թշնամուոյն դիմացը Արամեան սրբուց  
մարտակից՝ որ իրենց արիական լանջացը վրայ կընդունին գոռ աշ-  
խարհակալի մը կայծակնացայտ հարուածները , ու կուզէ որ Արմա-  
ւիրը պաշտպանեմ սակաւաթիւ զօրաց գնդով . պիտի կատարեմ իմ  
պարտքս , անոր պարսպացը տակ պիտի սպասեմ թշնամուոյն թէպէտե  
բունն զօրութեամբ և յաղթական ըլլայ . ս՛վ անմահ գիւր , եթերա-  
կան կամարէն հովանացէք Հայաստանին վրայ , և գուք Թորգոմեան  
նախնի դիւցազունք , թող մի՛ տաք որ ձեր համբաւով ու փառքովը  
լեցուած երկիրը կործանի , և ժանտ ստիսին ստուրները կոխեն ձեր  
փառաւորեալ փոշին . թշուառ հայր , որ արեանց վտակներու մէջ ու  
զողեալ , իւր կենացը , գահուն և հայրենեացը համար թերեւս հիմա  
օրհասական ճիգը կը թափէ , ու չի գիտեր իւր բոլոր թշուառու-  
թիւնը . Արուսեակն ալ չիկայ . մեր վերջին յաղթութիւնը կատարելէն  
վերջը վազեցի արիւնաներկ Սօսեաց անստոր աւետելու իրեն այդ  
բերկրաւէտ լուրը . բայց իւր վերջին շունչը քաղելու համար հասա

եա . «Երանի թէ իմ մահս երջանկութեան զո՞ մը ըլլար Հայաստանին ,  
հօրս ու Արտաւազղին համար» , ըսաւ , ու եղբօրը գիբը թաւ իւր  
մաքուր հողին . . . ս՛հ , անձկալի և թշուառ քոյր . . . բայց պատե-  
րազմին շուկը կը սաստկանայ , գինուց շառուածները կը մօտե-  
նան , վաղեմ մտնամ Արմաւիր : (Կերբաց) :

**ՏԵՍԻՆ Դ .**

**ԱՐԴՈՒՍԱՐԴ , ՎԱՐՍԱԺ**

**ԱՐԴ .** — Յաղթանակեց դարձեալ Աղէքսանդր . ինկաւ Հայաս-  
տան ու տաղարեցաւ արեգերաց բազը . աչխարհի երաստանները ,  
մէկ անձի մը լանակալ ձեռքերուն անցաւ , ու մենք յետին արի-  
յաններն եզանք ազգաց նուիրական իրաւանց . մեր Արտաւազղայ  
գէմ կանգնած յաղթանակը վերջին փայլն էր որ դուարթացուց Հա-  
յոց ըլուրներն ու դաշտերը . հոն ինկան մեր քաջերը , ու Վահէ արդ-  
եօք անոնց գիականը մէջ խառնուեցաւ , յաղթանակներու սովորած  
գիւցազնի մը տակի է կենաց լոյսը պարտութենէ ետեւ . երթանք  
Արմաւիր Զարմայրին քով . իւր վրայ միայն մնաց Հայաստանի յոյսը :

**ՎԱՐ .** — Այո՛ , երթանք Արմաւիր . քանի որ դեռ օշը կը շն-  
չենք ու սուր մը կը կրենք ձեռքերնիս , հարկ է մինչեւ ցմահ չդադ-  
րիլ պատերազմելէ հայրենեաց համար :

**ԱՐԴ .** — Թշնամուոյն գումարտակները հոս Արմաւրայ պարսպացը  
տակ պիտի խուժեն անշուշտ . մօտալուս կործանումն հասած է հայ-  
կազանց հոյակապ Մայր քաղաքին վրայ , մեր աեղը հոն է . վաղենք  
ուրեմն :

**ՎԱՐ .** — Վաղենք հոն , դեռ արիւն ունինք թափելու : (Կեր-  
բաց) :

**ՏԵՍԻՆ Ե .**

**ՎԱՀԷ ՎԻՐԱՒՈՐԵԱԼ**

Իմ քաջ չօգքերուս բազմակոյտ գիականը վրայէն զողջօջա-  
քայ կը թափառիմ ու լսեցի իրենց մահուան վերջին հռնչիւնները .  
գիտնի վրայ տարածուեր էին ամէնն ալ , սուրս ձեռքս չէր , որ նշան



տար իրենց, ելլային ու յարձակէին պատերազմի գաշար. սուրս փչրեցաւ, բայց թշնամուսն արեանը մէջ... ստիպեալ իմ արիւնս ալ կը վազէ... պիտի չի կրնամ հասնիլ Արմաւիր. բացիւրդ պիտի լափեն անոր պարտաներն ու պարխաֆները. ու Վահէն հոն չէ, որ կուտի, թէեւ մինակ ու անդէն, սուրբութ, նիգախաց, և բացիբուն հետ... Զարմայր, դուն հոն ես, դուն Վահէին սրգին ևս. մեռի՛ր անոր պարտապար վրայ, ու քաղաքին աւերակներուն ստակ թաղէ՛ թշնամիներն ալ. ստիպեալ աշուրներս մթապնակցան... կը կոչեն զիս զխաթաւայ քաջագունքս... (Կիյնայ նուազեալ):

Տ Ե Ս Ի Լ Զ.

ԶԱՐՄԱՅՐ ԱՌԱՆՅ ՏԵՍԵՆԻՈՒ ՎԱՀԷՆ

ԶԱՐ. — Արմաւրաց մէջ են թշնամիք, կը լսեմ իրենց աղաղակները քաղաքացուց մահուան հեծութիւններուն հետ. բացիբու մասնուամ է արքայապանն քաղաքը. փուճ տեղը իմ գորքերս ու ևս, մեր արեամիր ներկեցիներ իւր փողոցներն ու պատերը. բայց սուր ևս Վահէ, հայր իմ, անշուշտ պատերազմին սուրը հնձեց անաղագճ քու փառասորեալ կեանքդ. երանի՛ք քեզի որ քաղաքիդ անկումը չի տեսար... Ի՛նչ, իմ հայրս մեռած, ա՛հ, դուն է այս մտածումները. ս՛չ, սպրէ՛ դուն հայր իմ, սպրէ՛ Հայաստանին ու քու սրբուց Զարմայրին համար. քեզի հետ մէկտեղ կը վազենք Հայաստանին սակն կողմը, նոր գնդեր յարուցանելու թշնամուսն գէմ, նոր բանակներ կազմելու հայրենիքը կանգնելու համար. ապրէ՛ դուն հար իմ:

ՎԱՀ. — Ի՛նչ ձայն է որ կը լսեմ:

ԶԱՐ. — Ո՛վ է այն, չըլլայ թէ... ս՛վ իմ հայրենիքս լափող բոջրքեալ բոցեր, արդեօք զո՛վ պիտի տեսնամ հոն ձեր նշույններովը. (կը մօտենայ) կը գողան ծնկուրներս... ս՛վ տեսիլ, իմ հայրս... դեռ չունչը վրան է, արիւնաթաթաւ գեանի վրայ տարածուամ. բայց գուցէ մահաբեր չէ վէրքը. սիրտս կը բարախէ, ս՛վ ուրախութիւն, ձեռքս կը սիտէ, այո՛ կենդանի է:

ՎԱՀ. — Ո՛վ ևս դուն:

ԶԱՐ. — Քու սրդիդ, քու սիրեցեալ սրդիդ:

ՎԱՀ. — Ազտամաճայն հառաչանք մը... ակունջս զարկաւ... իմ

սրբուցս անունը տուիր դուն. ս՛հ, սուր էր թէ իւր գրկացը մէջ կուրենայի փչիլ իմ հոգիս:

ԶԱՐ. — (Իւր քեւերուն կոթներով ծնգացք վրայ կեղայ Վահէ) Աւա՛ղ, դեռ չի ձանչցար զիս. այդպէս ուրեմն դո՛հ ինկար դուն Հայաստանին համար:

ՎԱՀ. — Ե՛ս... այո՛ ինկայ... դո՛հ Հայաստանին համար... սրբէս զի սակն Հայոց օրինակ ըլլամ. (կամաց կամաց ուժ կառնէ) բայց ինչո՞ւ գողցեցաւ պատերազմը. արեանց հեղեղներ վաղցուցի ևս թշնամուսն գնդերուն մէջ, երբ յանկարծ վէրք մը արիւնազանդ զիսկանց մէջ թոցուց զիս. բայց զօրութիւնս կարծարծի... սուր է, սուր է իմ սուրս. Վահէն եմ ևս, կուզեմ պատերազմի մէջ մեռնիլ. (Զարմայր իր սուր կուսայ որուն վրայ կոթներով Վահէ ոտի վրայ կեղայ դողդոջուն) բայց զի՛նուց շտապմունքները ալ չեմ լսեր. փախան ուրեմն թշնամիք, աղա՛տ է ուրեմն իմ գիւցազուն նախահարցս հայրենիքը... ս՛վ ցնձութիւն, թշնամուսն ձեռքը չէ մտակեր իմ գահուս. թող տուէք որ երթամ բազմիմ անոր վրան, Հայկազանց աւերուական պանծալի գահն է անիկայ. ա՛հ, գոնէ... ստիպեալ կը նուազիմ դարձեալ...:

ԶԱՐ. — (Կը նսեցնէ զթեք քարի մը վրայ) Հոս նստէ՛ հայր իմ ու հանդիցնուր ցառոցդ սագնուար. բայց ինքզինքը կորսնցուց դարձեալ... հայր իմ, անձկալի հայր, ի՛նչ կընեմ, առիկ լաւ չէ որ ինչուան վերջը չզիսնայ իւր թշուտութիւնը, կը կարծէ որ իւր գահը ու թաղաւորութիւնը դեռ իր ձեռքն են, դեռ չի գիտեր Սրուսեկին մահն ալ:

ՎԱՀ. — Հո՞ն է իմ արքունիքս:

ԶԱՐ. — Արքունիք մահուան:

ՎԱՀ. — Զարմայր... սրբեակ իմ Զարմայր... դուն ևս:

ԶԱՐ. — Հայր իմ, զրկէ՛ քու սրդիդ:

ՎԱՀ. — Ո՛ւր են իմ գորքերս:

ԶԱՐ. — Հոն գաշտին մէջ:

ՎԱՀ. — Անշուշտ Արմաւրաց մէջն ենք:

ԶԱՐ. — Արմաւիր մեր գիւմուցն է հայր:

ՎԱՀ. — Ե՛հ, փարսապեան մտոցս յիշարները. ի՛նչ բոցեղն ըլլա է որ աշուրներուս կը զարնէ. ինկան գորքերս, կործանեց ու գահս, Արմաւրաց մուխերը երկիւնք կը բարձրանան... ս՛վ Հայաստան, Հայաստանդ իմ. (զեհիքը կիյնայ):

ՉԱՐ. — Ո՛վ հայր իմ, ապրէ՛ իւր վրէժը առնելու համար:

ՎԱՀ. — Ես պիտի մեռնիմ, ու դուն յաջորդէ՛ ինձի, իմ ու ազգիդ վրէժը առնելու. եթէ չի յաջողի՝ մեռի՛ր դուն ալ քու հօրդ պէս. անմահ է առաքինի քաջութիւնը, ու անիծեալ են Արտուազգի պէս հայրենեաց դաւաճանները... որդե՛ակ, երկնից անէծքը անոր դիտուն վրայ կը սրարտի կայծակի պէս, ու Արուսեկին...

ՉԱՐ. — Ահ, հայր իմ, մի՛ անիծեր Արուսեակը, այլ լս'ց անոր վրայ:

ՎԱՀ. — Ես լս'մ Արուսեկին վրայ:

ՉԱՐ. — Այո՛, մեռաւ ու սիրոյ և առաքինութեան մաքուր գո՛ծ թոռա երանութեանց գրգարանը, կրկին անգամ իւր սիրար քու յիշատակիդ վրան բարախեց և Հայաստանին. (լալ):

ՎԱՀ. — Ներէ՛ գուտար իմ... քիչ մը ետքը քեզի կուգամ ես. թէ որ Արտուազգին շունչը բիծ մը թողուցած է քու կուտական ճակտիդ վրայ, իմ ուրուականիս ցուրտ համբոյրներովը պիտի մաքրեմ գայն... ո՛հ, դուն հիմայ անշուշտ մեր հսկայազարմ գիւցազանց զիրկը նստած, անոնց գգուանքներուն մէջ կը մխիթարուիս Հայաստանին թշուառութեանցը վրայ... բայց ես, ես անմխիթար պիտի ըլլամ երանուէտ օթարանաց մէջն ալ իմ հայրենեացս վրայ... ինչուան որ... բայց զինուց ձայն է... չըլլայ թէ թշնամիք... որդեակ Զարմայր... եկու՛ թեւերուդ կոթնիմ... որպէս զի համարձակ կարենամ շարժիլ... սուրբ:

Տ Ե Ս Ի Լ Է.

ԱՐԴՈՒԱՐԴ, ՎԱՐԱԺ, ԶՕՐԱՎԱՐԷ ԵՒ ԱՌԱՋԻՆԷ

ԱՐԴ. — Վերջապէս գտանք զքեզ Տէր, բայց ինչ վիճակի մէջ:

ՎԱՀ. — Ո՛վ երջանկութիւն, իմ քաջերս են... Հայոց զիրկը պիտի արձկեմ վերջին շունչս... հեռու են ինձմէ թշնամիք և Արտուազգ...

ԱՐԴ. — Ինչպա՞ս դաւաճանը իւր արեանը մէջ. մեր հոս զպուտանը տեսանք զինքը միայնակ դաշտին մէջ յուսահատ և խոժոռաղէմ, նիզակներ և նետեր տեղացինք լւր վրան ու մահացու զինուց

տակ թաղուեցաւ. մօտեցանք իւր զիակին քով ու տեսանք որ անզէն էր:

ՎԱՀ. — Անմահ է Աստուածոց արդարութիւնը... Արգուարդ, օրհասարեր վայրկեանը կը մօտենայ. քեզի կը յանձնեմ իմ որդիս... ու Հայաստանը... մօտեցէ՛ք ինձի... քաջ գօթականքդ իմ... ձեր արեան մինչև վերջին կաթիլը... թափեցէ՛ք հայրենեաց համար... որպէս զի... ամէնքը իմանան... թէ գուք տոնօք Վահէին գրչակին... տակ զինուորներ էիք... մօտեցէ՛ք ինձի... հայ զէնքերու փայմունքը... վերջին անգամ... դարնեն աշուրներս... ու անկէ ետքը... յաւիտենական մութի... մէջ... ծածկուին... (կը մեռնի):

ՉԱՐ. — Հայր իմ, հայր իմ. (կուլայ):

ԱՐԴ. — Իւր վերջին խօսքերը սուրբ պատգամներ են մեզի համար. երթանք քաջութեան մեր բարձրարեւ լեռներուն մէջ. հոն աշուղնիս Հայաստանին վրայ ըլլայ:

Վ Ե Ր Զ





9